Ն. ԲԱՐԱԹԱՇԻԼՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱՑ [1]

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

ՄխիթարուԹիւն, սգաւոր Վրաստան!
Ինչո՞ւ է տխրել դէմքըդ այրական.
Շարժւած ամիւնը հանգած պօէտի
ՇարժՔից վերստին ցաւը քո սրտի,
Թէ նորա մըԹին գերեզմանը խոր
Որբ հոգուդ համար շատ է ահաւոր...

Կը Թաղես, այո՛, դարձեալ քո երգչին,
Բայց նորա վառած զգացմունքներին
Զըկայ գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կը մնան յաւիտեան,
Եւ դու նրանցով պիտի մի այլ օր
Թաղես քեզ մաշող ցաւերը բոլոր։

Եւ քո՛ զ, անցաւոր շիրիմից շիրիմ,
Հէգ ժողովրդի երգիչ մտերիմ,
Քո՛ զ, որ տանջւել ես անհանգիստ սրտով,
Ցաւիտենական հանգիստ անվրդով։

---

[1]) Կարդացած ապրիլի 25-ին. տես «Մուրճ»-ի Ներկայ №-ի «Զանազան լուրեր»։